




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8789

281.69

12-65

04 NOV 2009

281.64
Ա-65

ԱՇԽԱՐՀԸ ՑՆՑՈՂ ՍՊԱՆՆՈՒԹԻՒՆԸ

ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ՝ ՆԱՀԱՏԱԿ ՂԵԻՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ

ՀԱՅ ԽՈՐԱՆԸ ՀԱՅ ԿՂԵՐԻՆ ԳՈՂԳՈԹԱ

«ՄԱՅ ՔՈ ԳԵՂԵՑԿԱՑՈՅՑ ԶՔԵԶ», ՍՐԲԱԶԱՆ ՅԱՆՐ



ՄԱՐՏԻՐՈՍԱՅԱԾ ՂԵԻՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ ԴԱԳԱՂԻՆ ՄԷՋ

281.64
Ա-65

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԳԾԵՐ, ՆԱՀԱՏԱԿ ՂԵՒՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ



ՋԱԽԷՆ Ա.Ձ. — Ողբացեալ Ղեւոնդ Արքեպիս-կոպոս Դուրեան, Նահատակ Արտաւազդ Վարդապետ Գալէնտէրեան (1915), Գեր. Տ. Գարեգիմ եպիսկոպոս Խաչատուրեան, լուսանկարուած Սկիւտար, Կ. Պօլիս, 1900-ին, երբ Սարկաւազներ էին:



Ծնած է 1880 Յունիստ 1-ին Սկիւտար: Իր ուսումը առած է Ս. Խաչ եւ ապա Պէրպէրեան վարժարաններու մէջ: Երկու տարի ուսուցչութիւն ընելէ ետք՝ 1898-ին Արմաշու գաւառի վարժարանը մտած է. 1901 Մայիս 10-ին իր ինը ընկերներով վարդապետ ձեռնադրուած է Եղեշէ Արքեպիսկոպոս Դուրեան: 1902-1908 Գաղաթիւի Ս. Թադաւոր եկեղեցւոյ քարոզիչ: 1906-1908 Կրօնական Ժողովի անդամ եւ Ա. Առնադպիր: 1907-1912 Օրմանեան, Իգմիրլեան, Դուրեան եւ Արշարունի պատրիարքներու նաեւ Պատր. տեղապահ Մանկունիի օրով Պատր. փոխանորդ: 1912-ին Ագր. Պոլսոյ Առաջնորդ, 1913-ին Եպիսկոպոս ձեռնադրուած: 1914-1919 Պոլսկարիոյ Առաջնորդ: 1919-1920 Պոլսոյ Կրօնական Ժողովի անդամ: 1920-1922 Ջախէիոյ առաջնորդ, 1925-ի վերջերը Հոգեւոր Հովիւ Մանչեսթրի: 1931-ին Ամերիկահայ Երեսփոխանական Ժողովը առաջնորդ ընտրեց զինք Մ. Նահանգներու եւ Գանատայի թեմին:

Ունի 10 հասակի չափ գրքեր կրօնական-խմայտասիրական, եւ բանասիրական-պատմագիտական բովանդակութեամբ:

Իրեն գնահատանք իր արժանիքներուն՝ Իգմիրլեան կաթողիկոսէն եւ Յունաց Յովակիմ Գ. տեղեկերական պատրիարքէն պատուուած է լանջախաչերով: Ունի Սէնթ Մարկարիթի ասպետի աստիճան:




Ստեփանն Տակ

5162-71

ԱՇԽԱՐԻՆ ՑՆՑՈՂ ՍՊԱՆՆՈՒԹԻՒՆԸ

1933 Դեկտ. 24-ի Կիրակի առաւօտ ժամը 10-15-ին Նիւ Եօքսի Սր. Խաչ եկեղեցւոյ խորանին առջեւ դաշու-նահարութեամբ սպաննուեցաւ Ամերիկայի եւ Գանատայի թեմերուն արժանաւոր առաջնորդ պատուական անձնաւորութիւն Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանը:

Նոյն այդ եկեղեցւոյ Հոգաբարձութեան հրաւերով Ծննդեան տօնի պատարագը մատուցանելու համար, առաջնորդ սրբազանը իր «պատի կարտին» հետ կը գնա եկեղեցին, կ'զգեստաւորուի եւ դպիրներու երգեցողութեամբ կ'առաջնորդուի պատարագի... եւ պատարագը կ'ստանայ իրական նշանակութիւն երբ դասին մօտ նըստարաններու երկու կողմերը դարանակալ ոճրագործ



Սր. Խաչ եկեղեցւոյ Ներքնամասը, Ուր Խողխողուեցաւ Ամերիկայի Առաջնորդը

խմբակցութիւնը նման վայրի գաղաններու, օծեալին ի համրոյ՝ երկու կողերէն կը խրեն մագործի դաշոյններ եւ նոխար ՍԵՂԱՆԻՆ առջեւ հողին կուտայ իրեն ողջակէզ՝ հողի կարենալ կրկնելու «վիրաւորուեցայ...» եւ կը վախճանի...:

Եւրեւրեցի արագութեան մէջ, միայն մէկ վայրկեան առող կազմակերպուած այս ոճիրը մարդկային մտքին մէջ չը տեղաւորուելու ստորին արարք մը ըլլալով՝ եկեղեցին դիմող միամիտ հաւատացեալները սպաննութեան վայրկեանի ընթացքին եկեղեցւոյ ամէն կողմերէն բարձրացած արուեստական հրմշտուքներու, «կրակ կայ» ձայնի, կոխներու, վերնատունէն թուղթ թափելներու յանկարծական եւ անմեկնելի երեւոյթներուն կ'ստիպուին յառի... մինչ խորանին մօտ առաջին նստարաններու միջանցքին մէջ կուր եւ իրարանցում ձգողներու «հերոս ընկերները» որպէս գայլեր կը վարատէին գառնուկը... սիրեցեալ առաջնորդ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանը:

Դաշունահարուած գետին ինկած, վախճանած, Սըրբազանին չուրջը մղուած իրարանցումը սկիզբի վայր-

կեանին կուրի կը փոխուին տեւորիստներէն եւ տեւորիստները շրջապատող դաշնակներէն, որոնք եկեղեցին սկսելէն ի վեր բռնած էին այդ կէտը եւ կ'սպասէին համբուրելով սպաննել խաչը ձեռին, օրհնութիւնները շրթներուն, պատարագիչ Դուրեանը:

Փոքրիկ եկեղեցին բաղձութեամբ խտացած, լեցուած ըլլալով եւ ետեւի բաղձութիւնը դէպի սպաննման կէտը հրուելու շարժումը հնարաւորութիւն չի տար «տղերց», որ իրենց «հերոսները» մղեն դէպի դուռը եւ դանոնք փախցնեն վայրկեան առաջ:

Դաշունահարուած, գետին ինկած Սըրբազանին գըլխին հարուածներ տուող գաղաններ իսկ կը գտնուին, տղերցմէն, անշուշտ այն հասկացողութեամբ, որ եթէ չէ մեռած, մեռնի՝ վերջանայ...:

Սպաննումէն առաջ՝ շարագործ Մաթէոս Լէյլէկեանի ջղային դէմքը, անհանգիստ շարժումները, շարունակ թափորի ձամբայի կողմը դիտելու արտասովոր կեցուածքը եկեղեցի գացող կարգ մը կիներու եւ մարդոց ուշադրութիւնը կը գրաւէ, այնքան որ, կ'ստիպուին ըսել՝ «այս մարդը եկեղեցի եկած է, քէ քատրոն մտած է...»: Վերջնակէտին նոյն այս անձինք կը տեսնեն թէ՛ Լէյլէկեանը կը հակի դէպի սրբազանը չոքելու նման եւ կը կանգնի ու կ'սկսի հրմշտուքներու: Վերջնակէտի իրարանցման մէջ տեւորի գետինը գրաւող խմբակէն մի քիչ հեռու դանտուող Հայեր դժուարութեամբ կը խոյանան առաջ եւ կը հարուածեն Մաթէոս Լէյլէկեանը եւ ծան Սարգիսեանը:

Մարդիկ կատաղած վազկերու նման կը փաթթուին իրարու, ծանօթները անձանոթներու հետ մահու եւ կ'նաց կոխը կը սցեն մոյեղնութեամբ: Ոճրագործները մեղապիղծները կը հարուածեն տեւորիստները՝ բռնող ձեռքերը եւ կը ջանան աղատել, դուրս հանել դանոնք: Ոճրագործները ապտակու կուրի վարձուրանքի ընթացքին Հայուն մէկը կը խածնէ Լէյլէկեանի ականջը, այն մտքով թէ՛ փախչելու պարագային իր ականներու հետքը



ՋԱԽԷՆ Ա.Ձ. — Մաթէոս Լէյլէկեան (Գլխաբաց) Միւսը Նշան Սարգիսեան, Դեկտ. 24-ի Կիրակին կը ձերբակալուին Սր. Խաչ եկեղեցւոյ մէջ:

նշան մը կ'ըլլայ այն մարդուն, որը գործեց աշխարհը ցնցող այդ ոճիւրը:

Եկեղեցւոյ դրան քովերը եւ այն ճամբան որ կ'ընթանայ դէպի ոճրակէտը, այդ կէտի երկայնքին մինչեւ դուռը իրարանցումը կը սաստկանայ եւ արուեստական կը դառնայ: Կը շարունակուի ծանօթ կուսակցութեան անդամները:



Սրբազան Դուրեանը սպաննելու յանցանքով ձերբակալուած Դաւանակցականներ՝ աշէն ձախ նստած՝ Մարքին Մօգեան, Ա. Երկանեան, շան Կոնգալէս Զալըգեան: Կանգնածները՝ Նշան Սարգիսեան, Մաքոս Լէյլէկեան եւ պաշտօնայ մը: Այս անկարին մէջ չեն ոճրագործութեան յանցանքով ձերբակալուած Յարութիւն Սարափեան, շան Միքիմանեան, շան Անդրէասեան, Միքիման Զատիկեան:

Բէն եւ գերագործի կերպով ջանք կը թափուի տակնուվրայութեան մէջ ծածկել ոճիրը ու կորսնցնել ոճրագործներու հետքը: Եկեղեցւոյ դուռը կը փակուի: Սրբազանէն չինք նստարան հեռու գնուող «պատի կարտ» Կորկոտեանը կը դառնայ գոնապահ...:

Կը հասնի ոստիկանութիւնը:

Սրբազանը մեռած... Թափորին մասնակից Սրբազանին հետ ընթացող Սրբ. Խաչ Եկեղեցւոյ հովիւ Յովսէփ Կարապետեան Եպիսկոպոսը մարած ըլլալով՝ «ռչինչ չէ տեսած...»: Եկեղեցին արիւններու մէջ... շուարած, չլսուած, վախճած, սոսկացած բազմութիւններ քարացած վիճակով հեծեծութիւններ կ'արձակեն, կուլան, կ'ողբան, կուրծք կը ծեծեն, նախատինք կը տեղան: Կը ձերբակալուին Մաթէոս Լէյլէկեան եւ շան Սարգիսեան, Բալու Համհամ գիւղացիներ: Երկուքն ալ Նիւ Եօրքէի, ըզրազմունքով նպարավաճառ, երկուքն ալ Դաւանակցականներ:

Մինչ այդ՝ միւս մեղսակիցները, ոճրագործութիւնը զիւրացնողն չը կը խոնարհին բազմութեան հետ եւ կը փախչին նախապէս պատրաստուած ինքնաշարժներով:

Ոստիկանութիւնը իր տեղւոյն վրայ կը ճշդէ ոճիրին ընդթիւ: Մանրակրկիտ կերպով կ'ուսումնասիրէ կատարուած անցքին եղելութիւնը իր բոլոր կողմերով եւ կը հասկնայ թէ՛ այս զարհուրելի, տմարդ, գաղանային եւ աշխարհի պատմութեան մէջ չարձանագրուած ոճրագործութիւնը կազմակերպուած է կազմակերպութեան մը կողմէն եւ որուն մասնակցած ըլլալու են առնուազն 25-30 անձինքներ:

Ամերիկայի ոստիկանութեան համար շատ հեշտ էր գտնել միւս մեղսակիցները քանի որ ձերբակալած էր երկու Դաւանակցականները: Դեկտ. 24, 25 եւ 26-ի օրերու ընթացքին Ամերիկայի ոստիկանութիւնը Նիւ Եօրքէն ձերբակալեց 7 Դաւանակցականներ, որոնք Դեկտ. 24-ին եկեղեցին եղած են եւ ունեցած են ակտիւ մասնակցութիւն: Իսկ Եօնիւրն Սիթիէն ձերբակալած եւ հարցաքննուած է բոլոր այն Դաւանակցականները, որոնք Դեկտ. 24-ին եկեղեցին եղած են, աշխատած են ի հաշիւ իրենց տեղորոշող ընկերներուն եւ պրծած են ոստիկանութեան ճիւղներէն:

ՄՍԱԳՈՐԾԻ ԴԱՆԱԿԸ ԴԱՇՈՅՆԻ ՓՈԽՈՒԱԾ

Սրբ. Խաչ Եկեղեցիի մէջ Դուրեան Սրբազանը հարուածող դանակներէն մէկը Լէյլէկեանի կանգնած տեղը գետինը ինկած կը տեսնէ փոքրիկ աղջիկ մը եւ որպէսզի կռուի բռնողները դանակը չը գործածեն, զայն կը վերցրնէ եւ խորանին կողմը կը նետէ: Դանակին կոթը փաթթուած կ'ըլլայ թուղթերով, որպէսզի գործածողին ձեռքի հետքը կոթին վրայ չըլլէ:

Նիւ Եօրքէի ոստիկանութեան կողմէ Դեկտ. 26-ին դաւանակին հետքը գտնուեցաւ: Նիւ Եօրքէ 27-րդ փողոցի վրայ դանակ սրող կողակացի Դաւանակցական Օտապաշեանը ձերբակալուեցաւ: Այս մարդու խանութին մէջ գտնուեցաւ նոյն դանակէն 9 հատ: Օտապաշեանը գերմանական

ընկերութեան մը 12 մագործի դանակներ ապսպրած էր, որոնց 3-ը «ծախած» կամ տուած էր «ինքը չի յիշեր որ ուր...», բայց 9 հատը կը մնային իր խանութը:

Եկեղեցին թողուած եւ ոստիկանութեան ձեռքը ինկած դանակը երկու կողմէն սրուած եւ դաշոյնի վերածուած է «առաջնակարգ սրող»ներու կողմէն: Օտապաշեանը Սրբազան Դուրեանի սպաննութեան պատասխանատու վիճանէն մին է եւ կը գտնուի բանտը հիւանդ վիճակով: Կ'ըսուի թէ՛ Օտապաշեանը խոստովանած է, որ ինքը 2 դանակներ «ծախած» է Մաթէոս Լէյլէկեանին: Կ'ըսուի թէ՛ ոստիկանութեան մօտ գտնուած դանակը ածելիի նման սրուած է երկու կողմէն:

ՏՕՆ՝ ԿՍԿԻԾԻ ԵՒ ՍԳՈՅ

Հայոց ԾՆՈՒՆԴԻՆ ու ԿԱՂԱՆԴԻՀ համակ թախիծի եւ կսկիծի փոխող Դուրեան Սրբազանի սպաննութեան դուռը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ոչ միայն Ամերիկայի եւ արտասահմանի Հայերուն՝ այլ՝ եւ համայն աշխարհին:

Քաղաքակիրթ ժողովուրդներ զարհուրեցան գործընթացը այս վայրագ ոճիրէն եւ մարդկային խղճի խորունկ ծալքերէն բարձրացաւ համակրանքի վշտակցութիւնը այնպիսի ուժգնութեամբ, որ մարդկային պատմութիւնը դեռ արձանագրած չէր:

Սրբազանը Անգլիական հպատակ էր: Սրբազանը 1925-ին Մանչեսթրի հոգեւոր հովիւ եղած պահուն անձ-

Ուժգին կերպով ցնցուող եւ խորապէս ազդուած երէկ, որդ մեծ կղերականը եղաւ Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ պետը՝ Պիլըփ Մէնինկ: Այս ազդեցիկ եկեղեցականը անձնական բարեկամն էր նահատակ Դուրեանին: Պիլըփ Մէնինկ կատարուած աններելի եղեռնի դատը համարեց Ամերիկայի կղերականութեան դատը եւ իր ազդեցութիւնը դրաւ ուր որ պէտք էր ու պահանջեց գտնել ոճիրին զրդապատճառները եւ զանոնք յանձնել արդարութեան, պատժելով մարդասպանները եւ զանոնք մարդասպանութեան մղող զեկավարները:

Պիլըփ Մէնինկ սիրաթափարութեամբ իր հոյակապ եկեղեցին տրամադրեց Հայոց, որ հնարաւորութիւն ըլլայ



Սուգի Հագուստով Պիլըփ Մէնինկ եւ Նազարէքեան Ծ. Վարդապետ Սէյմք ձան տը Տիվայնի մէջ

նապէս ծանօթացած էր Քէնդըրպլըրի Արքեպիսկոպոսին, եւ Անգլիոյ Եկեղեցւոյ պետը գնահատելով Դուրեան Սրբազանի հմտութիւնը իրեն բարձր եկեղեցական, զայն գնահատած էր կրօնական պատուանշանով մը:

Քէնդըրպլըրի Արքեպիսկոպոսը լսելով ոճիրին բոթը, դառնացած ոգիով կը դիմէ Անգլիոյ կառավարութեան եւ կտրուկ կերպով կը պահանջէ որ Անգլիոյ կառավարութիւնը պաշտօնապէս պահանջէ Ամերիկայի կառավարութիւնը զարհուրեցալի Դուրեան Սրբազանը մորթող չարագործները: Վաշինկթընի Անգլիական դեսպանը կը հրահանգէ Նիւ Եօրքէի Անգլիական Քօնսուլին հետեւի ոճրագործները գտնելու եւ պատժելու ոստիկանական բոլոր քայլերուն եւ օրը օրին իմացնել կատարուածները: Եւ այսօր Անգլիական Քօնսուլը ուշ ուշով կը հետեւի ոստիկանութեան քայլերուն եւ կ'սպասէ Ամերիկեան դատարանի արդար վճիռին:

Սրբազանի սիրեցեալ հօտին սրտարուի յարգանքներն ու արցունքները տալ այն պատուական անձնաւորութեան, որը իր պարտականութեան վսեմ ճանապարհին վրայ յօթարեցաւ տալ իր կեանքը, քան որ շեղել եւ իյնալ թշնամիին ծուռ ճամբաներուն մէջ:

Պիլըփ Մէնինկ հիացած էր նահատակի բարեկրթութեան, քաղցրհոգիութեան, անուշ ժպիտին, ներող ոգիին, ընդունակ մտքին եւ ապրած մաքուր կեանքին: Պիլըփ Մէնինկ «չէ գգացեր եղբրական վիշտ մը այնքան խոր ու այրող՝ որքան Դուրեանի խաղաղութեամբ սպաննութիւնը»:

Բապպի Վայդ, Յունաց Մետրոպոլիտը եւ Ամերիկայի միւս կղերականները Պիլըփ Մէնինկի հետ դիմած են Ամերիկեան կառավարութեան, որ իր ամէն կարելի միջոցներով ոստիկանութիւնը գտնէ ոճիրն հեղինակները եւ զանոնք մաքրէ Ամերիկայէն:

ԲՈՒՆԿԱԾ ՑԱՍՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՄԷՋ

Գլուխէն շանթահար, մրրկուող, այրուող Ամերիկա-հայ դաշութը (բացի Դաշնակցութենէն) ընդվզեցաւ գործուած վաղարութեան դէմ եւ իր արդար ցատումը հրապարակ դրաւ անակնկալ հակադէմ ցոյցերով: Ամերիկայի բոլոր քաղաքներու մեծագոյն սրահները ծանրաբեռնուեցան հայ ժողովրդի շերտերու բազում հազարներով եւ եղան բողոքի ու պահանջի դիմումներ Ամերիկայի նախագահին, նահանգապետներուն, քաղաքապետներուն եւ պահանջ եղաւ պատժել ոճրագործները եւ ոճիրը դեկամբրոյ Դաշնակցութիւնը:

Այնքան ուժգին եղաւ օտար եւ հայ մասսաներու այս պահանջը, որ Ամերիկայի դաշնակցային կառավարութիւնը ստիպուեցաւ անձամբ ստանձնել ոճրագործները հետապնդելու եւ ձերբակալելու խնդիրը: Եւ ժողովուրդը ամէն տեղի մէջ պոյքով երթարկեց Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութիւն, բարոյական պոյքով երթարկեց անհատ ամէն Դաշնակցական, գործի, յարաբերութեան, բարեկամութեան կամ դրացնութեան ամէն մարդերու մէջ: Պոյքով ազդեցութիւնը Դաշնակցութեան վրայ չամեցուցիչ նշանակութիւն ունեցաւ: Ամերիկայի Դաշնակցականները մարդու երես չեն կարող նայիլ, առնո՞ք կը նային դետիւն, ուր կը հանդէս իրենց սպաննած Սրբազանը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՂԱՐԿԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

1924 Յունիս 1-ին Պիւրի Մէնիկի (Եպիսկոպոսականներ) Եկեղեցիի, հոյակապ Սէյնթ Ճան տը Տիվայնի մէջ կայացաւ ԽԱՉՈՒԱՅ ՍՐԲԱՉԱՆԻ յուզարկաւորութեան տխուր բայց պատմական արարողութիւնը:

Ամերիկայի պատմութիւնը նման յուզարկաւորութիւն եթէ արձանագրած ունի, միայն քանի մը հատ են: Կսկիծի, սուգի, յարգանքի եւ յուզումի զգացմունքներով ծանրացած հայ եւ օտար ժողովուրդներու բազմահազարները կորադուրի եւ վշտաբեկ հոգիով եկած լեցուցած էին մեծ եկեղեցւոյ ներսը առտուն շատ կանուխ եւ անհատում շարքեր ձգել էին եկեղեցւոյ դուռը ներս մըտնելու մարմաջով առցուն:

Առտուն ժամը 10-ին սկսուած յուզարկաւորութեան մեծ արարողութիւնը վերջացաւ կէսօրէն վերջ ժամը 3-ին տոնենները: Եւ երեսակայիլ որ հազարներ դուռը սպասեցին ժամերով, մինչեւ որ հնարաւորութիւն եղաւ անցնիլ մեծ մարդու դադաղի առջեւէն, վերջին համոզոյր տալու, վերջին մնաս բարեւը ասելու խաչուած Սրբազանին: Յուզարկաւորներու մէջ կային Հայեր, որոնք եկած էին մինչեւ հետաւոր Գալիֆօրնիայէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ. — Սէյնթ Ճան տը Տիվայնի մէջ Հայոց պատարագը հմայիչ էր: Անուանի երգիչները Զապէլ-Արամ, Ռոզ Զուլալեան եւ Արագեան իրենց հնչուն ձայնի թովչութեամբ հմայեցին թէ Հայերը եւ թէ օտարները: Հայ երգը խունկի ծուխի նման կը տարածուէր Սէյնթ Ճան Տը Տիվայնի կամարներուն բոլոր յայրը եւ գրաւիչ ուժգնութեամբ կը փաթաթուէր ամէն

հոգւոյ, ամէն սրտի եւ թերեւ ԽԱՉՈՒԱՅ ՍՐԲԱՉԱՆԻ թեւածող ոգիին...:

Հայկական պատարագը այնքան հմայած է եպիսկոպոսական եւ այլ եկեղեցիներու պաշտօնական ներկայացուցիչները, որ անոնցմէն ոմանք բազմացած են իրենց եկեղեցիին մաս կադմել տալ հայկական պատարագի դըլ-խաւոր մեղեդիները:



Դուրեան Սրբազան Զգեսաւորուած


Մարդկային ճշմարիտ թախիծով համակուած Արքեպիսկոպոս Մէնիկը խաչուած Սրբազանի վրայ խօսեցաւ յոյժ գեղեցիկ դամբանական մը, զայն դասելով անմահներու շարքին: Անոր յաջորդեցին Յոյն Մեղրոպոլիտը եւ ուրիշներ, որոնք եւս դրուատեցին նահատակը եւ լացին մանուկի նման:

Խաչուած Սրբազանի յուզարկաւորութեան ատեն նըշմարելի էր հայ կիներու ամբողջ հազարները, որոնց եւ ոչ մէկը հոն եկած էր ներկուած երեսներով...: Յուզարկաւորութեան օրը խաչուած Սրբազանի դադաղի առջեւէն անցան 20,000 ժողովուրդ արտասուելից աչքերով:

ԳՆԱ ՄԵՌԻՐ, ԵԿՈՒՐ ՍԻՐԵՍ

Ամերիկայի Առաջնորդ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանը Հայաստանեայց Եկեղեցւոյ սահմանադրութեան եւ վերին իշխանութեան հաւատարիմ եկեղեցական էր: Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեան հաւատարիմ էր Հայոց Կաթողիկոսին եւ խանդակաթ կերպով կը սերէր իր հայրենիքը, Խ. Հայաստանը: Նա նուիրական պարտականութիւն կը համարէր սիրել իր հայրենիքը եւ իր աստանդական հօտը օղակել, զօդել մայր հայրենիքին:

Շատ պարզ էր, որ Ղեւոնդ Արքեպիսկոպոսի այս քաջաւորը հայեացքը խոտոր կ'ընթանար Հայաստանին երդուեալ թշնամի Հ. Յ. Դաշնակցութեան որդեգրած հակահայաստանեան ուղղութեան հետ:



ԵՌԵՆԻԸՆ ՍԻՐԻԻ ՄԷՋ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ
ԵՈՒՆԻԸՆ ՍԻՐԻԻ ԵՐԽԱՍԱՐԴՈՒՄԻՆ ԲԱՐԵՒԻ ԿԱՆԳՆԱԾ
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԳԱՆԻՆ

Դաշնակցութիւնը Հայաստանէն քշուելէն ի վեր, դարձեր էր զաղութահայ կազմակերպութիւն եւ ամէն յոյս կորսնցնողի դերով կ'անձկար զաղութահայութիւնը լարել Խորհրդային Հայաստանի դէմ եւ վարել հակահայաստանեան քաղաքականութիւն: Դաշնակցութիւնը ակտիւ թշնամի ըլլալով Խորհրդային Հայաստանի հակառակներուն, եթէ հնար չէր Խ. Հայաստանի բարեկամը սեւացնել իր մամուլներով, ապա նա կընար գնդակի բռնել տալ եւ վերջացնել Հայաստանը սիրող անհատը:

Ահաբեկումի եւ սպաննումի այս քաղաքականութիւնը

նը իւրացուեցաւ Դաշնակցութենէն երբ նա խաղաւ երկրէն դուրս շարտուեցաւ: Անկից վերջն է, որ նոյն այս կուսակցութիւնը իւրացուց սարսափի եւ տեռորի քաղաքականութիւնը: Առաջին հերթին սպաննուեցան երեք Հըն-չակեաներ Սուրիոյ մէջ. — ՅԱՐԷԹ ԻՍԿԷՆՏԵՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ եւ ՄԻՀՐԱՆ ԱՂԱՋԱՐԵԱՆ: Յետոյ սպաննուեցաւ ԳԼԶԵԱՆԸ եւ ուրիշներ, իսկ ամենէն վերջը Առաջնորդ ՂԵՒՈՆԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԸ:

Դուրեանի եւ միւս զոհերուն Դաշնակցութիւնը տըրած է «Պալէստինա գործակալ» անունը եւ հետեւաբար զանոնք սպաննելէն իսկ յանցանք չէ համարուած յաջ Դաշնակցութեան: Դուրեանը սակայն, ողջմիտ անձնաւորութիւն էր եւ կ'ընդգիծանար Դաշնակցական ազգայնասայ քաղաքականութեան հերոսի նման: Դուրեանի հաւատարմութիւնը հանդէպ Հայոց Կաթողիկոսին՝ Դաշնակցութեան համար անկերելի էր, այս պարագան ցուցադրուած է Դաշնակցական թերթ «Հայրենիք»-էն՝ վեցէն եօթը ամիս հրահարուած պայքարներով:

Եռագոյնի ծիծաղելի խնդիրներ հանդիսանալու ըլն նպատակն էր՝ տիրանալ Ամերիկայի ազգային գործերուն եւ եթէ մէկ տիրացած ըլլային Ամերիկայի նման հզոր թեմի մը, միւս թեմերը ինքնին կ'ստրկանային եւ կը դառնային Դաշնակցութեան վասալը: Դուրեան Սրբազան ընդգրկեցաւ Դաշնակցութեան այս քանդիչ քաղաքականութեան տղամարդկօրէն, ցոյց տալով օրինական եւ իրաւական այն ճանապարհը, որը օգտաւէտ եւ օրհնաբեր էր զաղութահայ զանդուածներուն:

Դիւցազնի մը նման մաքառող մեր Սրբազանի մեծութիւնն ու արիութիւնը իր մահէն յետոյ զիտցաւ հայ ժողովուրդը: Ազգային եկեղեցական գործերու ներսը մակըրթուած Դաշնակցական անկարգութիւնները, սպառնալիքները, ծեծերը, սեւացրէքեան կոպիտ միջոցները, հայհոյանքները եւ այլն՝ գործի վրայ գանուող Ռամկավարները անգամ թուլացուցին եւ Սրբազանը զգաց որ միւնակ է: Եւ ոչ ոք թափանցել ուղած է եղբայրաբար խմանալ Դուրեան Սրբազանի չըբաւորութեանը... Վեհանձնութեամբ նա ինքնիւ մէջ տառապել է եւ սակայն նշանակեց մը իսկ չէ վերջած իր բարձր եւ զնահատելի դիրքէն:

Հրահարուած պայքարի ընթացքին Սրբազանի անձի պաշտպանութիւնը եղած է կատարելապէս թերի եւ ինքնին անբաւարար:

Հրահարուած պայքարի ընթացքին մեծապատիւ ազգայինձիները առաջնորդարանը ձգած են պարտքի տակ եւ առաջնորդը ձգած են չըբաւորութեան մէջ: Անոր բընակարանի վարձը մնացած է անվճար, (հիմա վճարուած): Իր անունի մասին չենք ուղեր խօսիլ, եւ սակայն

ահաւոր իրողութիւն է, որ անոր ներքեւի հագուստները եւ գուլպաները իր ձեռքով կարկտնուած ցնցոտիներ եղած են... եւ այս տխուր, ցաւալի պարագան կը պարզուի դիատունը...:

Նոր տարուայ առթիւ իր ծերունի մօրը գրած նամակը (որ կը մնայ իր սեղանին վրայ քսաներեք տողարի չէքով մը) կը յայտնէ թէ՝ այս քսան երեք տողարը խնայածքս եւ ամբողջ ունեցածս է, որ քեզի կը զրկեմ նոր տարուայ առթիւ. աւելիին մի սպասեր, վասնզի չիկա. նեղ կացութեան տակ եմ:

Սրբազանի չըքաւորութեան պատկերը սարսափելի կը դառնայ երբ նահատակին մարմինը Սբ. Խաչ Եկեղեցիէն կը փոխադրուի ոստիկանատուն եւ հոն դրպանէն կ'ելլէ միայն 67 սէնթ...:

1934 Յունվար 1-ին յուզարկաւորութեան մեծ հան-

ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԶՔՄԵՂԱՆՔԸ

Սեբաստացի Կորկոտեանը իբրեւ պատի կարտ պարտական էր անբաժան կերպով մնալ Սրբազանին հետ մինչեւ վերջը: Նա կրնար չապիկ հազնիլ եւ թափորին հետ լնթանալ, իսկ պատարագի պահուն նա կրնար չապիկ լնթանալ, եւ սպասաւորել իր պաշտպանեալին խորանին առջեւ կամ դասին մէջ: Կորկոտեանը բայց կարծեր է թէ (ինչպէս ամէն մարդ կրնայ կարծել) պատարագի հագուստներով զգեստաւորուած կղերականին ձեռք չի վեր-ցուի բեկեղեցւոյ մէջ եւ հետեւաբար Կորկոտեանը սպաննութեան վայրէն հինգ նստարան դէպի ետ աթոռ մը կը գրաւէ ժամերգութիւնը ունկնդրելու համար: Կորկոտեանը վշտէն նիհարեց եւ հալուի մոմի պէս...:

* * *

Սբ. Խաչ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը Սրբազանի ինքնապաշտպանութեան մասին հարկ եղած միջոցները

դէսի ատեն Սէյնթ Ճան տը Տիմաշի հոյակապ եկեղեցւոյ մէջ իր սառ դադաղին մէջ հանդիպող Խաչուած Սըրբազանի թաղման հանդէսը դեկավարող պահանջողական աղագայինները թեւերնին սեւեր կապած՝ գործի անձեր էին մեծաւորի մահուան առթիւ ինքզինքնին ցոյց տալու, խաչեցեալին յիշատակը յարգող հայ սգաւոր հանրութեան...:

Դառն է իրականութիւնը եւ սակայն հայ կեանքին մէջ մեծ անձնաւորութիւններ մեռած են չքաւոր վիճակով...: Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանը մեռաւ չքաւոր եւ սակայն նա իբր մարդ մնաց բարձր, ԱՆՆԿՈՒՆ, ԱՆՅԱՂԹԵ-ԼԻ եւ ԱՆՄԱՀ:

«Գնա մեռիք, եկուք սիրեմք», իր տեղը եւ նշանակութիւնը ունեցաւ դարձեալ, յանձին Սրբազան Դուրեանի:

ձեռք առած չէ: Անոնք բաւականացած են եկեղեցւոյ դուրսի կողմը ոստիկան մը դնել, որը լուր իսկ չէր կրնար ունենալ ներսի կատարուածէն: Սբ. Խաչ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը տեղեակ էր որ Աղագային Էրեսփոխանական Ժողովէն առաջ ու յետոյ դաշնակցական մամուլը իր շարքերու կիրքերը լարած էր առաջնորդին դէմ սաստիկ կերպով եւ առաջնորդը կէս բանտարկեալի վիճակ ունէր Առաջնորդարանին մէջ: Այս Հոգաբարձութիւնը որ պնակ պտտցնող էր, մինչեւ Սրբազանի պատարագ մտնելը անշուշտ տեսաւ հասկցաւ որ եկեղեցին լեցուցած են Դաշնակցականները եւ հետեւաբար դաշնակները հիշ որ չէ կրնային սովորական ծեծի եւ կռիւի խնդիրներ հանել իրենց «թշնամի» Առաջնորդին դէմ: Ռամկավար եւ Դաշնակցականի խառնուրդ Սբ. Խաչ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան անհոգութիւնը եւ իրենց հովիւին, Յովնէփ Եպիսկոպոս Կարապետեանի տեսողութեան պակասութիւնը եւ մարիլը դատապարտելի արարքներ են:

«ՄԵՆՔ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՆՔ»

Դաշնակցական մամուլ «Հայրենիք»ը հպարտութեամբ կը յայտարարէ թէ՝ ձերբակալուածները հպարտ են ու չեն ուրանար որ իրենք դաշնակցականներ են: Դաշնակցական թերթ «Հայրենիք»ը ճիշդ է, որ ոճրագործութեան յանցանքով ձերբակալուած բոլոր Դաշնակցականները կ'ընդունին, որ իրենք եղած են Սբ. Խաչ Եկեղեցին եւ «Դաշնակցական են»:

Սրբազանի տեղորէն առաջ կատարուած միւս տեղորները գրամական եւ այլ միջոցներով փտած են զանազան դատարաններու մէջ եւ տեղորիստները ազատուած են օրէնքի կապանքներէն: Ոճրագործութեան մղուած Դաշնակցական անուս, տգէտ մասսան տարբեր ներշնչումներ չի կրնար ունենալ Սրբազանի սպաննութեան առթիւ եւ հետեւաբար հպարտօրէն պիտի յայտնէր Սբ. Խաչ Եկեղեցին գտնուիլը եւ Դաշնակցական ըլլալը, քանի որ վստահած են ու գիտեն թէ՝ Դաշնակցութիւնը գիրենք պի-

տի ազատէ օրէնքի կապանքներէն, ինչպէս ազատեց Ս. Տիրուհիի եւ այլոց տեղորիստները:

Ոչ ոք գիտէ սակայն թէ՝ Ամերիկայի ոստիկանութիւնը մէկ ամսուայ լուրթեան ընթացքին ձերբակալած եւ հարցաքննած է աւելի քան 1,000 անձնաւորութիւններ — բան մը որ հազուադիւս է եւ բնաւ չէ պատահած աշխարհի դատարանական պատմութեան մէջ: Ամերիկեան ոստիկանութիւնը ինչեր եւ ինչ նուրբ թելեր գտած է մաֆիական կազմակերպութեան մէջ, որը զարհուրանքի ենթարկած է գաղութահայութիւնը իր տեղորներով եւ զանազան ձեւի բռնութիւններով:

Չիկալ բան, որ չը յայտնուի, ու վաղը կը յայտնուի ահաւոր բաներ: Մինչեւ աստ Ժողովրդական մասսաներուն յայտնի է որ մեղսակից 10 Դաշնակցականներ ձերբակալուած են, վաղը յայտնի պիտի ըլլայ որ 10 թի-

ւը 5-ով բազմապատկեն իսկ բաւարար պիտի չըլլայ լրացընել ոճրագործներու թիւը:

Վաղը յայտնի պիտի ըլլայ, որ ոճրագործութեան մղուած՝ բանտարկուած խեղաքաները ոչ թէ ելեքտրական աթոռին, այլ խենդանոց զրկուելու արժանի անհատներ են: Ելեքտրական աթոռին վայելները, ոճիրը յղա-

ցող ղեկավարներն են: Վաղը յայտնի պիտի ըլլայ, որ Դաշնակցական կինն ալ իր մասնակցութիւնը բերած է եւ ձեռքի հովանոցով խցած է այն մարդու վզին, որը բռնած կ'ըլլայ ոճրագործ Մաթոս Լէյլէկեանը: Եւ Դաշնակցական կինը միւս դաշնակներու հետ աշխատած է ապահովել ոճրագործներու փախուստը:

ՅՍՏԱԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Քննութիւններէն դուրս կուգայ յստակ եղբակացութիւն մը: Դուրեան Սրբազանը սպաննողները բժիշկի թելադրութիւն ստացած ըլլալու են, ո՞ր եղէն ի՞նչպէս հարուածել, որ մահը լինի վայրկեանական: Իսկ ձերբակալուածներու միանման պատասխանները եւ օրինական պա-

հանջները եւ այլն՝ ցոյց տուած են, որ փաստաբանի թելադրանքներն են: Ուրեմն Սրբազանի սպաննութեան գործին մէջ մաս ունին, լուր ունին բժիշկներ, փաստաբաններ եւ խելացիներ...:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի մամուլը դատապարտեց Դաշնակցութիւնը եւ զայն համարեց դարուս վայրագ կազմակերպութիւնը: Ամերիկայի եւ Քանադայի 35,000 թերթերը հաղորդելով Ծննդեան օտնի ընթացքին կատարուած այս քսանիկ եւ ծանր խորհրդակցութիւններու ենթակայ ընել դաշնակ կուսակցութիւնը: Տեղի ունեցած խուժուժ արարքը իբրեւ յանցանք կցուեցաւ հայ անունին եւ այժմ բոլոր Ժողովուրդները ծանր խօսքեր եւ ծանր ակնարկութիւններ կ'ընեն հայերու հասցէին, իսկ ոմանք նոյն իսկ սկսեր են չքմեղացնել Թուրքերը... Եկեղեցական արարողութեան պահուն անմեղ կղերին սպաննումը այնքան խոր աղբած է Ամերիկացի Ժողովուրդը

ներուն, որ կարգ մը գործարանատէրներ հրահանգած են իրենց գործարանէն դուրս ընել բոլոր Հայերը: Թացը չորին հետ աջուելու այս ցաւալի եւ դառն երեւոյթին պատասխանատուն Հ. Յ. Դաշնակցութիւնն է: Ամերիկայի գործարաններէն արժանի են դուրս քշուիլ միայն Դաշնակցականները, որոնք արիւն քրտինքով ձեռք բերուած սէնթերը կը տրամադրեն դաշնակ ղեկավարներուն, ոճիրներ սարքելու եւ անմեղ Հայերու արիւնները հոսեցնելու... խայտառակելով հայ անունը եւ հայ պատմութիւնը:

Եւ ի՞նչ ըսել այն տխմար Դաշնակցականին, որ ապահովագրութեան փալիսին կը տրամադրէ կուսակցութեան, ձերբակալուած ոճրագործները օրէնքի կապանքներէն ազատելու մտադրութեամբ...:

ՊԱՏԵՅԱՊԱՇՏՆԵՐԸ ԳՈՐԺԻ ՎՐԱՅ

Առանց ի մտի ունենալու կարգ մը միակողմանի երեւոյթներ պարտականութիւն ունինք ընդունիլ, որ գոյութիւն ունի Ամերիկայի Աղագային Կեդրոնական Վարչութիւնը: Ամերիկահայ Առաջնորդ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանի սպաննութեան դատը վարելու գործը պէտք է եւ պիտի տանի Աղագային Կեդրոնական Վարչութիւնը եւ ոչ ուրիշներ: Եւ Ամերիկահայ գաղութը ոյժ պիտի տայ Աղագային Կեդրոնական Իշխանութեան դատական խնդիրը օրէնքի ճանապարհով հասցնել իր վախճանին:

Դժբաղդաբար սակայն, պղտոր ջուրերու մէջ ձուկ որսալու ատակ մարդիկներ գոյութիւն առին և հոս, որոնք ամենադատապարտելի միջոցներով կը փորձեն հրապա-

րակ իջնել որպէս պատեհապաշտներ «Խորհրդային Հայաստանի Բարեկամներու Ժողովրդական Ցանձնախումբ» անունով Ամերիկահայ գաղութին երբ կոչեր կ'ուղղեն, իշխանութեան մէջ իշխանութիւն կը ջանան կազմել, այս պարագան կրնայ վնասել արդարադատութեան:

Դաշնակ ղեկավարներէն դուրս ո՞վ կայ որ Խորհրդային Հայաստանին բարեկամ չէ, ոչ ոք. հետեւաբար ասոնք պէտք է դադրին Ժողովներ սարքելէ եւ դրամներ հանգանակել: Քաղաքական ունիցէ հոսանք կամ խմբակցութիւն իրաւունք չունի դրամներ հանգանակել Արքեպիսկոպոսի սպաննութեան անունով: Այդ խնդիրը կը պատկանի Ամերիկահայ Աղագային Իշխանութեան:

ՉԱՐԻՔԻՆ ԳԼԽԱԽՈՐ ԱԿԸ

Փարիզ հրատարակուող «Ապագայ» քերթը 1933, Դեկտեմբեր 30-ի համարով կը գրէ։—

Եւ առաջին քայլին մեր աչքերուն առջեւ կը ցցուի չարաշուք պատկերը Դաշնակցութեան վերջին Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին, որուն մէջ պէտք է փնտռել սաղմնաւորումը գալիք ահաբեկչութեան ալիքներուն։

Այդ ժողովէն ետք անյայտացաւ այդ մարմնէն բխած ղեկավար մարմինը։ Ոչ ոք պէտք էր գիտնար թէ ո՛ւր է անոր վայրը, ոչ ոք պէտք էր գիտնար, թէ որոնցմէ բաղկացած է ան։

Որո՞ւ դէմ ուղղուած էր օրինականացած երեւցող քաղաքական մարմնի մը այս յանկարծական ու խորհրդալից ալիքափոխութիւնը դէպի դաւադրական մարմին։ Թըշնամի՞ն, թուրքի՞ն դէմ։

Ինը-տասը ամիսներ անցած են այդ «անյայտացումէն» ի վեր եւ մէկ մազ չփրցուեցաւ թշնամիին գլխէն։ Այդ նոյն շրջանին սակայն Պէյրութ, Աթէնք եւ Նիւ Եորք գետին փոռուած հայ զոհերը տուին պատասխանը։

ԱՅԴ ԴԱՒԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԶԱՎԱՍՏԻՆ ԴԷՄ ԷՐ։

Մութին ու անյայտութեան մէջ թաղնուած, ինչպէս բոլոր վատուի եւ երկչոտ ղեկավարներն են իրենց անձնական ապահովութեան մտահոգութիւնովը, եւ ահաբեկչութեան թեւերը զինող եւ զոհերու ցուցակ պատրաստող դաւադրական մարմինը իր «յարձակողականը» պիտի պայթեցնէր իր ճամբուն վրայ ցցուողներուն դէմ, իր քաղա-

քական համոզումներուն եւ ձգտումներուն արդարացումը։

Եւ տրուած էր կարգախօսը, արտասանուած հրահանգը։— Պէտք էր պատրաստել դաւաճանութեան աւազան մը, անոր մէջ թաթխելու համար այդ կուսակցութեան տեսակէտներուն ու գործունէութեան տարակարծիք բոլոր հայերը։ պէտք էր օգնութեան կանչել եկեղեցիէ, դըժբախտ, հայրենասիրութեան, անկախութեան սրբաբնիկները։ պէտք էր ղինուորագրել համայնավարութեան խրատելիակը եւ գործածել անխնայ ներսը թէ դուրսը...։

Եւ դաշնակցական մամուլն ու բեմը հնազանդ տըրուած հրահանգին ու արտասանուած կարգախօսին՝ ձեռնարկեցին գործի աննախընթաց մոլեղնութեան թափով մը եւ ստեղծուեցան «հայրենասիրութեան» եւ «դաւաճանութեան» ճակատները, որոնցմէ առաջինին վրայ կանգնեցուած պիտի ըլլար Դաշնակցութիւնը իր անյայտ, դաւադրական ղեկավարութիւնով, երկրորդին վրայ Դաշնակցութեան դուրս միւս Հայերը, անոնցմէ «ամէնէն ցայտունները»՝ նշաւակ ահաբեկչական ցուցակի եւ գործի...։

Այդ ճակատները կան այսօր, այո, հայրենասիրութեան եւ դաւաճանութեան ճակատները, բայց մէկ սրբազրութեամբ, իւրաքանչիւրը՝ իր արժանի եւ ճիշդ տեղը։ Դաշնակցութիւնը դաւաճանութեան ճակատին վրայ եւ միւսները հայրենասիրութեան ճակատին վրայ։

Ու ասիկա անողոք, երկաթեայ, անխորտակելի փաստերու ահարկու ծանրութեամբը։

ՊԱՐՈՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ ԿԸ ՅԵԿԵԿԱՅ ՍԻՐՏԸ ՓՐԹՈՂ ՄԱՆՈՒԿԻ ՄԸ ՊԷՍ

Յունվար 18-ին իր բնակարանին մէջ ձերբակալուեցաւ Նիւ Եորքահայկ Գովհաննէս Անդրէասեանը։ Անդրէասեանը Նիւ Եորքի գաղնակ Արմէն Կարօ Ակումբին վարիչն էր եւ շատ թունդ Դաշնակցական մը։

Ըսուած է թէ՝ ձերբակալուած Դաշնակցականները «հպարտ ենք որ Դաշնակցական ենք»ը իրենց առաջին խօսքն է ոստիկանութեան մօտ, Գովհաննէս Անդրէասեանը սակայն ոչ միայն իր հպարտութիւնը չը յայտնեց, որ ինքը Դաշնակցական է, այլ սիրտը փրթող մանուկի մը նման կը հեկեկար եւ աչքերէն ծորող արցունքները գետի նման կը թափէին, երբ կը մտնէր ոստիկանական փաթըօ-ը...։

Գովհաննէս Անդրէասեանը (Չումուշկեզեցի) կ'ամբաստանուի իբր Դուրեան Սրբազանի սպաննութեան ղեկավարը ըստ «Տէյլի Սիւրըք»ի։ Յունվար 22-ին, որ դատական հարցաքննութեան օրն էր, այս մարդը դատարան բերուեցաւ եւ տարուեցաւ առանձինն զրահապատ օթոմոպիլով եւ 6 ոստիկաններու պաշտպանութեան տակ։ Գովհաննէս Անդրէասեանը 42 տարեկան է։

Յունվար 17-ին Փէթըրսընի մէջ ձերբակալուեցաւ Տիգրանակերտցի Միհրան Չատիկեանը եւ առաջնորդըւեցաւ բանտ։ Անոր գլխաւոր յանցանքը կը կայանայ այն բանին մէջ, որ ինքը Դեկտ. 24-ին եղած է Սբ. Խաչ եկեղեցին, բայց ստած է, կ'իմանանք։



Հարիւրաւոր ոստիկաններ կը պաշտպանեն ռերագործները


ՆԻԻ ԵՕՐՔԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵԻ ՅԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՑՈՅՑԵՐԸ

Մինչեւ աստ դատական հարցաքննութեան բոլոր օրերու ընթացքին, դատարանի ներսն ու դուրսը հաղարաւոր Հայեր մեծ մասով կ'իներ, հսկայական ցոյցեր ըրին։ Կառավարութիւնը պարտաւորուեցաւ յաճախ հարիւր ձիաւոր եւ նոյնքան ալ յետիոտն ոստիկաններով արգելել յուզուած, զայրացած Հայերը, որ չը յարձակուին եւ չը բղթան ոճրագործութեան յանցանքով ձերբակալուած Դաշնակները։

Հայ կ'իներ զայրոյթով լեցուած, խումբերով կը փորձէն ճեղքել ոստիկաններու շարքերը եւ մղուել դէպի դը-

րահապատ ինքնաշարժները, ուր դրուած կ'ըլլան ոճրագործները։

Մարդ սարսուռ կ'զգայ դիտելով Նիւ Եորքի դատարանի առջեւ բռնկող Հայորդիները, որոնք բռնեցք կը բարձրացնեն եւ թուր կը նետեն անմեղը սպաննող ոճրագործներուն։ Ձեռքերնէն չլթայուած յանցաւորները ի տես հայ ժողովրդի այս մեծ զայրոյթին գլուխին գետին կախելով կ'աճապարեն մտնել ոստիկանական զրահապատը (ինքնաշարժը) եւ ազատուիլ նախատինքներու ահաւոր տարափներէն...։



Նիւ Եորքի դատարանի առջեւ հայ ժողովուրդի մէկ ցոյցը։ Հայ կիներ ցուցադրականութիւնը բռնած են, որոնց վրայ գրուած է «ԱՆԿՑԻ՝ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ», «ՄԱ՛Հ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ»։

ԳՆԹՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՏԵԻՔ ՇԱՏ ԿԱՐԺ

Դեկտ. 24-ին Սրբազան Դուրեանի սպաննութեան առթիւ կ'ըսուի թէ Դաշնակցականները ապրած են ներքին հրճուանք եւ զբաղուած են նոյնիսկ հեռաձայնով շնորհաւորել զիրար։

Ժողովրդական խաւերու խօսքերէն դատելով, եղած են մարդիկներ, որոնք այդ իրեկունը ուրախութեան սեղաններ իսկ սարքած են եւ կոնծած են «հերոսներու» կենացը, որոնք քաջի նման մաքրած են քար գայթակղութեան վասն Դաշնակցութեան, Ամերիկայի Առաջնորդ Դուրեանը։ Յաջորդ օրը սակայն, ցնծութիւնը փոխուեցաւ տրամուծեան, երբ ոստիկանութիւնը երկաթեայ թաթով ձերբակալել սկսաւ «հերոսները» եւ զանոնք սեղմեց երկաթեայ ձողերու ետեւ, քամել տալու համար իրենց գործած աններելի մեղքը։

ԳՈՐԾՈՒԱԾ ՄԵՂՔԸ ԱՆՆԵՐԵԼԻ Է.— Ամերիկահայ ժողովուրդը չի կրնար մոռնալ, չի կրնար ներել ոճիւրը

կազմակերպողներուն եւ գործադրողներուն։ Այն բնական ցասումը որ դուրս է եկած Ամերիկահայ ժողովրդի խանձրուած սրտի փաթերէն, այրող, անմոռնալի ցասում է եւ կրնայ շարունակուիլ երկու սերունդ։

Չաւակը վշտացած, դառնացած հօրը կսկիծը կրնայ ժառանգել եւ դատապարտել Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարները։ Ժամանակն է որ կողպտուած, խաբուած Դաշնակցական մասսան ըմբոստանայ, տրորէ ու խորտակէ իր ղեկավարները եւ անոնց կործանարար գործերը։

Ժամանակն է, որ Դաշնակցական մասսան թքէ Թաւ-չանճեանի սպաննութեան յանցանքով տասը տարի բանտարկութեան վճիռ ստացած եւ երեք տարի բան պառկած Մարդուկէսեան Վարդապետի երեսին եւ զայն դուրս քշէ հրապարակէն։ Ժամանակն է, որ իջմիածինի Վեհափառ Հայրապետը կարգալոյծ հռչակէ այդ սեւ անցեալով եւ սեւ ներկայով արարածը, որը կղերականի սքեմին տակ միայն անարգանք բերաւ եկեղեցիին։

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՎՃՌԻՆ ԲՆՈՅԹԸ

Յենուելով «Նիւ Եօրք Ամերիգըն»ի 1934 Յունվար 24 համարի տեղեկագրութեան՝ Ղեւոնդ Արք. Դուրեանի ըստ պաննութեան յանցանքով ձերբակալուած 11 Դաշնակցականներէն 8 հոգին՝

- ՄԱԹԷՈՍ ԼԵՅԼԷԿԵԱՆ
- ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԼԳԳԵԱՆ
- ՀԷՐԻ ՍԱՐԱՖԵԱՆ
- ՃԱՆ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ
- ՄԻՀՐԱՆ ԶԱՏԻԿԵԱՆ
- ՄԱՐԹԻՆ ՄՈԶԵԱՆ
- ՕՍԿԱՆ ԵՐԿԱՅՆԵԱՆ
- ՆՇԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Կրէնտ ձիւրիի կողմէ իբր Առաջին Աստիճանի ոճրագործներ ամբաստանուած են եւ ըստ աայնմ պիտի սկսի իրենց դատավարութիւնը:

* * *

Իսկ դանակ ծախող Օտապաշեանը իր արհեստին բերումով կրնայ դանակ ծախել սեւիցէ մարդու եւ հետեւաբար կրնայ ազատ ձգուիլ:



Մաքոս Լէյլէկեանի գիւղացի Փափագեանը Դաշնակցութիւնը պաշտպանելու համար կը հարուածուի ցուցաբանելու եւ ոստիկանութիւնը կ'ազատէ զինք ստոյգ մահէ:

ԱԼԻՍ ՍԹՕՆ ՊԼԷՔՈՒԷԼ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՈՃԻՐԸ

Դուրեան Արքեպիսկոպոսի բարբարոս սպանութիւնը՝ Սովիէթ Միութեան կարգ մը թշնամիներուն վայրագ եւ անկրօն նկարագիրը ցոյց կուտայ: Եթէ այս սահմըուկեցնող ոճիրը Ռուսիոյ մէջ գործուած ըլլար, — եթէ՝ ծեր եւ անուանի Առաջնորդ մը մասգործի դանակներով սպաննուած ըլլար խորանին մօտեցած պահուն, Ս. Ծնունդի առաւօտը, — չատեր Ամերիկայի մէջ պիտի ըսէին. «Ա-

նասուած մարդոցմէ այս բանը կ'անկալուի»: Հիմա որ ոճիրը գործուած է իրենք զիրենք եկեղեցասէր կոչողներու կողմէ, իրենք ի՞նչ պիտի ըսեն:

Արարք մըն է ասիկա, որուն դատը բացայայտ է ամենուն համար:

ԱԼԻՍ ՍԹՕՆ ՊԼԷՔՈՒԷԼ

Պաստն, Մէս.

ՅԱԽԱԿՑԱԿԱՆ ԴԵՌԱԳԻՐՆԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻԻՊԱՏՈՍԷՆ

ԱՄԹՕՐԿԻ ՏՆՕՐԷՆԷՆ

Առաջնորդարան Հայոց,

Հաճեցէք ընդունիլ իմ խիստ անկեղծ ցաւակցութիւններս Դուրեան Արքեպիսկոպոսի տխուր ու եղբրական նութիւնը գնահատուած էին Անգլիոյ մէջ եւ ես գիտեմ թէ մահուան ատթիւ: Իր ծառայութիւններն ու անհատական մեր ցաւին լիովին կը մասնակցին նաեւ իր այնտեղի բարեկամները:

ՃԵՐԸԼՏ ՔԷՄՊԸԼ
Ընդհանուր Հիւպատոս Անգլիոյ

Առաջնորդարան Հայոց,

Հաճեցէք ընդունիլ մեր խորունկ ցաւակցութիւնները Ղեւոնդ Արք. Դուրեանի եղբրական մահուան ատթիւ: Մենք հայ ժողովուրդին վշտակից ենք իր այս անդարմանելի կորուստին մէջ:

ՓԻԹԸՐ Ա. ՊՈԿՏԱՆՈՎ

ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ

Ուղղուած

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԳԵՐԱՊԱՏԻ ԵՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ՀՈՎԻՆԵՐՈՒՆ, ՊԱՏ. ՀՈ ԳԱԲԱՐԶՈՒԹԵԱՆՅ

ԵՒ ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՐԻԵԱՆՍ

Մերձակայ Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան խորհրդաւոր տօնախմբութեանց ատթիւ պարտականութիւն կը համարիմ ներկայ գրութեամբս Ամերիկահայ Հոգեւոր Հովիւներու եւ Հոգաբարձութեանց եւ Ժողովուրդիս սրտազին օրհնութիւններ եւ մաղթանքներ նուիրել եւ նաեւ արտայայտել ինչ որ կը զգամ իրենց համար եւ կը մտածեմ Առաջին օրէն որ պաշտօնիս ձեռնարկեցի, ուխտեցի Աստուծոյ Երեսփոխանական Ժողովի իմ փորձառութեանս եւ կարողութեանս չափով ծառայելու Ամերիկահայ դադութիւն ինծի առաջնորդ ունենալով անշահանդուրութիւնը, սէրը եւ անկողմնակալութիւնը: Այս ոգիով ստանձնած եմ պաշտօնս եւ պիտի մնամ նոյն ոգիով պաշտօնիս վրայ մինչեւ վերջ: Հրամայելու ոգիով չէ որ կը վարեմ պաշտօնս այլ ծառայելու ոգիով: Զոհողութիւն, այս է եւ պէտք է ըլլայ Հոգեւորականին նշանաբանը:

Ամէնուս բաղձանքն է անշուշտ որ այս հիւրընկալ երկրին մէջ բարձր պահենք Հայութեան պատիւը: Հայ ժողովուրդը պատեալով արհաւիրքներու շրջանին բարձր պահեց իր պատիւը, հարկ է որ դադութեան հայութիւնը չկորսնցնէ զայն ներկայիս: Արդարութեան եւ ճշմարտութեան սէրը պէտք է տրուի ամէն Հայու կուրծքին խորը: Ի՞նչ է այն ճիշդ որ ամէն կողմ կը տարուի բարձր պահելու համար ազգին անունը, եթէ ոչ պատիւի նախանձախնդրութիւնը: Այս պատիւի բարձրութեան համար պէտք է ամէն ներքին ուժեր համագործակցին:

Գաղութահայութեան համար եկեղեցին Հայրենիքի պատկերն է. հոն կը շնչենք հայրենիքի սիրտը, հոն է որ արդարութեան եւ ճշմարտութեան հրեղէն զէնքերով կը զինուինք, հոն է որ կը զգանք թէ Աստուած մեր մօտն է: Ստուգելու Հայ Եկեղեցին Հայուն ներշնչանարանն եղած է եւ կանգուն պահած է ազգը անկումներէ եւ դժոյզի փորձութիւններէ: Հետեւաբար որքան նախանձախնդիր պէտք է ըլլանք եկեղեցւոյ կազմակերպութիւնը անեղծ պահելու մասին: Մանաւանդ Հոգեւորականներէն կը պահանջուի որ մաքուր հաւատքով, մաքուր կենցաղով, մաքուր բարքով օրինակ հանդիսանան ժողովուրդեան եւ չգայթակղեցնեն հաւատացեալ ժողովուրդը: Օտարները որ այնքան խորունկ յարգանք ունին մեր եկեղեցւոյ հանդէպ, հոգեւորականք իրենց կեանքով պատկառելի պէտք է զայն դարձնեն: Եկեղեցւոյ հմայքը աւելցնելու համար հոգեւոր Հովիւները ոչ միայն հարկ է որ բեմին ու երգին կարողութիւն ընծայեն, այլ եւ յաճախակի այցելութիւններ տալով իրենց հօտին՝ ընտանեկան յարկերու խաղաղութեան, սիրոյ եւ սրբութեան ոգին դառնան:

Հոգեւոր Հովիւները անշուշտ առանձին պիտի չկրնանային արգիւնաւորել իրենց գլխաւոր պաշտօնը եթէ Թեմերու Հոգաբարձութիւնը դիւրութիւններ չընծայէին եւ նեցուկ եւ օժանդակ չըլլային Հոգեւորականաց:

Անշուշտ Հոգաբարձութիւնը ներկայիս աւելի եւս պէտք է մօտէն չլիման մէջ ըլլան ժողովուրդի ներքին ցա-

ւերուն, վստահ եմ որ անոնք իրենց ուղղամտութեամբը եւ յարատեւութեամբը կը հոգան եւ կը մատակարարեն ըստ արժանւոյն թեմին եկեղեցւոյ եւ դպրոցի վերաբերեալ գործերը եւ իմաստուն տնտեսութեամբ կ'արգիւնաւորեն օգտաշատ ծրագիրներն սատար հանդիսանալով ամենուրեք ներքին ամրապնդման: Զմբան սա խոտաշունչ օրերուն անշուշտ իրենց ուշադրութեանէն չեն վրիպեցներ աղքատներու եւ չքաւորներու օգնութեան գործը: Տնտեսական անձկութեան սա շրջանին ինչքան նպատակայարմար պիտի ըլլար երբ Հոգաբարձութիւնը քաջալեր եւ սատար հանդիսանային իրենց թեմի բարեսիրական ձեռնարկներուն, այսու անգամ մ'եւս ապացուցանելու թէ իրենց պարտականութիւններէն մին է որ կը կատարեն:

Շատ անգամ ընտանեկան վէճեր եւ ամուսնական խրնդիրներ դատարան ներկայացուելէ առաջ հոգեւոր Հովիւք եւ հոգաբարձութիւնք կրնան իրենց միջամտութեամբ ընտանեկան յարկերու խաղաղութիւն բերել: Ամէն թեմ եթէ ունենար եռանդամ հաշտարար յանձնախումբ մը ընտանեկան խնդիրներու համար, օրհնաբեր զեր մը կատարած պիտի ըլլար: Ընտանիքը ազգին հիմն է որուն վրայ կը հանդէս ժողովուրդին գոյութիւնը. որքան ապահովուի անոր խաղաղութիւնը այնքան նպաստաւորուած կ'ըլլայ պարկեշտ եւ առաքինի քաղաքացիներու պատրաստութեան գործը: Գաղութահայութեան մէջ անեղծ պէտք է պահուին Հայ նահապետական ընտանիքի առաքինապարզ ազգային շնորհները եթէ հոգ չտարուի այդ ուղղութեամբ նոր սերունդը շուտով պիտի ուղէ հեռանալ իր ծնողներուն հովանիէն, ինչ գէշ տպաւորութիւն կը թողուն նորահաս սերունդը վրայ ազգային ներքին եւ ճշմարիտ վէճերն: Ծնողներ իրենց քրտատնէական բարեպաշտութեամբը, մաքուր հայրենասիրական զգացմամբը Հայ անունին եւ Հայրենիքի հանդէպ՝ դաւակաց պատկառանք պէտք է ներշնչեն՝ Ծնողներ կրանիթեայ սիւններն են ընտանեկան սրբարանին: Եթէ անխոյժ գանուին իրենց պարտականութեանց, այսինքն երբ սխններ կը խախտին չէնքին փուլումը անխուսափելի եւ ահաւոր կ'ըլլայ:

Երբ մեր նոր սերունդին վրայ կը խօսիմ, կարելի չէ որ զանց ընեմ Հայ դպրոցը: Ամերիկայի մէջ հարիւրէ աւելի ազգային դպրոցներ ունինք այժմ եւ Ուսումնական Խորհուրդը աշայութեամբ կը հսկէ վարժարանաց վրայ: Միութարական է տեսնել որ թեմերու մէջ կրթական խնամակալութիւններ ջանք չեն խնայել յօգուտ եւ ի յառաջկալութիւններ ջանք չեն խնայել եւ դաստիարակութեան: Ուսուցիչներ հետզհետէ կը պատրաստուին ու ինչպէս եկեղեցեաց համար կը փնտռենք լաւ պատրաստուած եկեղեցականներ, վարժարանաց համար ալ կը բաղձանք որ ունենանք ողջամիտ ուսուցիչներ: Զգո՛յ՛ այն ուսուցիչներէն որոնք իրական ներկայ հայրենիքի դէմ կ'ար-

«ՄԱՅ ԲՈ ԳԵՂԵՑԿԱՑՈՅՑ ԶՔԵԶ»...

Գրեց՝ ՈՍԿԵՐԻԻԶ

Գրեց՝ ՈՍԿԵՐԻՉ

Ամենայն տեղ մահը մի է, այլ սակայն մահեր կան է, եւ ի՞նչ զոհողութեան գնով, մտերու աղատութիւնը որ առաւել եւս կը վսեմացնեն, կը պայծառացնեն ու կը կաշկանդող շղթաները: Ազատ խօսք, ու ազատ խորհուրդ-ներկայ բաղադրութեան ամենաթանկալին նուաճումներն ու դանձերն են, անձեռնմխելի եւ անխտիր-

Հեղեցիկացման ամբը, գործը։ Այս տեսակի մահաամբ մըն էր որ նահատակուեցաւ Ղեւոնդ Արքեպիսկոպոսն Դուբեան, եւ այսպիսի մահերուն Հանդէպ է որ կը մղուիս գոչել, արդարեւ «Մահ քո գեղեցիկացոյց զքեզ»։

Գեղեցկացոյց զընդ»:

Բիւրաւորներ սիրեցին այս արի ու բարի, անբասիր եւ աննկուն եկեղեցականը, հիացան իր անսահման խանդավառութեան ու խանդաղատանքին, եւ գրաւիչ գտան իր պարթեւ հասակն ու մանկունակ ժպիտը: Եթէ նոյնիսկ մարդիկ կային որ կը խորհէին թէ քիչ մը շատ էր իր ոգորումի նստք, բարձրադադակ՝ իր համոզումին ձայնը, եւ չափազանց՝ իր արտայայտութեան աւիւնը, անոնք իսկ այսօր իր աղեխարչ ու սխարլի մարտիրոսութեան առջեւ չեն կրնար չի խոնարհեցնել իրենց գլուխը ու չի մըմնջել. «Մահ քո գեղեցկացոյց զընդ»:

Իր աւիանն ու արիւնը, ահա թորեցաւ պարպուեցաւ երակներէն մինչեւ վերջին կաթիլը, իր վերջին պատարագին, ինքն իսկ պատարագաւոր ու պատարագեալ, հայ խորանի մը առջեւ:

നട ക്രിയ

Մադադութի՛ւն ամենեցուն :

Նախ խաղաղութի՛ւնն իր ալեկոծ հոգիին :

Խաղաղութիւնն յետոյ բոլոր՝ անոնց որ իր արեւնի
պատարագը բլծացին :

Ողբագլուխի՛ն իր հօտին, մեծին ու պղտիկին, հա-
ւատաւորին ու մոլորեալին:

Խաղաղութի՛ւն ամենեցուն . . . :

Իր արխանը թող զերկրին բլլայ Հայու ձեռքով թափ-
ուած հայ արխանին: Ան թող բաւ բլլայ յագեցնելու բոլոր
ախտաւոր ըղձանքները, լուալու բոլոր թունաւոր սրտե-
րը, կակղցնելու ու քաղցրացնելու բոլոր դառնութիւննե-
րը:

ԲԵ: Եւ այլ եւս «ոչ մէկ հայ ուրիշ ոչ մէկ Հայու մէջ թեան մեհեանը: * * *

ԹՆԱՄԻ ԹՈՂ ՀԻ ՄԵՍԵՆԷ»...: ԴԵՆՈՂ ԱՐՔԵԱՅԻՍԿՈՍՄՈՍ ԴՈՒՐԵԱՆ յժԻԱՐԵՅԱԼ, Ա

Իր արիւնը շաղախն ըլլայ թող հայ սրտերու միջեւ,
իցնէ բոլոր ճեղքերն ու խրամատները, ուր չի կրնան ալ-
եւս սպաղիլ առեւտրութիւնն ու ոխը:

Ուրիշ տեսակ խօսողին բերանը պապանձի, միտքը
չորնալ...

Իր նահատակութիւնը սակայն թող սա՛ ալ ընէ մեզի,
մեր մենծին ու պղտիկին, մեր իմաստունին ու տգէտին,
սորվեցնէ որ խորհելու, պատուութիւնը մենէ ոչ մէկին ի-
բաւունք կուտայ տնօրինել ուրիշներու խորհուրդներուն
տես ու տեսարել, թէ համոզումներու պայքարը, յաճախ
չինարար, երբ անհանդուրժողութեան ու ատելութեան
կանաչ բոցեր կը բռնկցնէ, երբ բռնութեան ու ոճրագար
զէնքերու կը դիմէ այլոց հանդէպ, այդ պայքարը կը դադ-
րի այլեւս կենսունակութեան ու յառաջդիմութեան նշան
ըլլալէ։ Այդ պայքարը մեզ ետ կը տանի դէպի բարբարո-
սութիւն եւ կործանում։ Մարդկութիւնը շատոնց փշրած

14

Ժողովական եւ Ժողովուրդ, եկեղեցական եւ աշխարհա-
կան, պաշտօնական եւ անպաշտօն, որպէս զի դադութա-
հայութիւնը իր բարոյական, ազգային, եկեղեցական,
հոգեւորական միջոցներով ազնուանայ եւ բարձրանայ ի
պատիւ Ազգին, եկեղեցիին եւ Հայրենիքին :»

Ու հիմա՝

Խաղաղութի՛ւն ամենեցուն :
 Խաղաղութի՛ւն իր մարտիրոս հոգւոյն :
 Խաղաղութի՞ւն իր հօտին, մեծին ու պղտիկին, հա-
 ւատաւորին ու մոլորեալին :
 Խաղաղութի՛ւն ամենեցուն . . . :

«ԿՈՉՆԱԿ»

ՂԵԻՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բաւի, կիրքի, չար նախանձի, ատելութեան գոհը եղար, ու անտրտուննջ ինկար գետին արհմաներկ, դաշունահար...
Նոր Գողգոթա... նոր Յուդաներ հաւմութեցին շուրջառդ փաղփում...
Խաչն ի ձեռիդ՝ խաչելութեան ելար անվախ ու աննրկուն...
Անարգեցելը վախն ու մահը, պայքարեցար քաջի մեան,
Դուրս քշեցիր տաճարներէն կեղծաւորներն, պիղծ դաւաճան,
Արդարութեան քունդ ախոյեան, եղար խիզախ ու կոթովի
Հայոց ազգի Կաթողիկոս վեհափառ Խոր Էրբաւմանին,
Հընազանդուդ զինուորն եղար, հաւատարիմ՝ իր պատուէրին,
Կեանքիդ գնով վճարեցիր տուդ տուրքդ ազգիդ եւ մայր երկրիդ,
Հակառեցար ու կուրծք տուրք թշնամեաց դէմ հայրենիքիդ:
Մարդ գայեբուր վոհմակին մէջ մըտար անվախ ու անվարան,
Բըզըճտեցին մարմինդ աւաճ, երբ քալէիր դէպի խորան...
Ու նըւաղումն աչքերդ յառած խաչելութեան վեհ նըկարին,
Աւանդեցիր շունչդ ու հոգիդ, աղօթքն շուրթիդ ինկար լուին...
Հիմա աչքերդ փակած յաւէտ, դագաղիդ մէջ կը ննջես լուռ,
Գլխուդ վերեւ պլպլացող մոմեր կ'ողբան մահըդ անլուր,
Թէեւ մարմնով վախճանեցար, սակայն հոգով ի նոր ծընար,
Համբո՛րք շիրմիդ ու անխնիդ, փա՛ճք յարութեանդ Էրբաւման...:

«Երիտասարդ Հայաստան»

ԱՐԴԱՐՈՒՆԻ

ԱՐԻԻՆԻՆ ԶԱՅՆԸ

Քալիֆօրնիոյ վիճակին նախկին առաջնորդ Գեր. Գա-
րեգին Նախկնապետ Խաչատուրեան Ֆրէզնօի Սր. Երրորդ-
դասիւն Մայր Եկեղեցւոյ մէջ ողբացեալ Ղեւոնդ Արքե-
պիսկապոս Դուրեանի յիշատակին նուիրուած Հոգեհաւ-
գրատեան ծեսի ստեղծ խօսածէն հատուած մը։—

Ինկա՛ւ Եկեղեցւոյ Հովիւ մը վերաւոր, ինկա՛ւ անպաշտպան՝ Աստուծոյ Տան անձեռնդիտելի սրբութեան անձ նատուր: Կը հաւատանք թէ մեր անէջքներէն աւելի եւ մեր անձնական դատողութիւններէն բարձր պիտի խօսի Նիւ Եօրբի Հայոց Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, «ընդ մէջ տաճարին եւ սեղոցի» եւ Խաչնալի զթոտ նայուածքին տակ Նափուած երկնապող արիւնը ողբացեալ նահատակին: Երկնապող կ'ըսենք, այո՛, վասնզի նա դաշոյնով արգելուեցաւ կատարելու յիշատակը այն մեղսաբաւիչ Զոհին՝ որուն ծառայեց 33 տարիներ անընդհատ, ոչ զերծ ան-

չուչտ մարդկային թեբու թիւններէ եւ նոյնիսկ գուցէ յան-
ցանքներէ, բայց ոչ արժանի կայենական դաշոյնին։
Ձոհին՝ զոր փոխանակեց իր իսկ արիւնքն՝ զոհաբերու-
թեամբ՝ որով կընքց իր մահկանացուն սրբազան պար-
տականութեան պատնէշին վրայ։

Այս՝, կը հաւատանք թէ դէպի սուրբ պատարագի Սեղանը յառաջացող Հովիւին արեան կաթիլները պիտի խօսին եւ պիտի բռնեն «Տեցի՛ Տէր եւ դատեցի», կամ՝ «Տէ՛ր, մի՛ համարիր դոցա զայս մեղս»։ Եւ այսպէս, այն բողոքին հետ խառնուելով նաեւ ներողամտութեան այս խօսքը շանթի մը պէս պիտի իջնէ խիղճներուն խորը անոնց՝ որոնց բռնեցքներուն մէջ դաշոյնի սարսուռը կայ դրոշմուած անշնջելի։ Այդ դրոշմը պիտի ըլլայ նաեւ արդարութեան մատնիչն անոնց։ Տիեզերական խիղճի դրոշմը բսել կ'ուզեմ։ Եւ ո՛վ կրնայ խուսափիլ անկից։

15

տայայտուին: Հայ լեզուի ուսուցման ջանք պէտք է լընայուի, վասն զի լեզուն պահապանն է ազգային նկարագրերին:

Ծնողքներ այնպէս մը կենցաղավարեն որ ներշնչեն իրենց զաւակաց թէ մեծ ազգի մը կը պատկանին, ազգի մը որ անհամար անմեռ հոգիներ եւ հերոսներ տուած է քաղաքակիրթ աշխարհի, որ Բիւզանդական պետութեան զաւակներէն իրաւունքներ բաղմեցուցած է, որ խաչակրութեան շարժումին անման զոհողութիւններով մեծապէս նպաստած է քաղաքակրթութեան, որ իր ապրած միջավայրին մէջ դեղարուեստական, ճարտարապետական եւ առեւտրական գործերով պատիւ բերած է:

Ահա ինչ որ կրնայի գրել շատ ամփոփ կերպով սոյն հայրական թղթովս իմ պատուական հոգեւորական գործակիցներուս, եկեղեցեաց պատուարժան հոգաբարձութեանց, եկեղեցասէր եւ կրտսէր միութեանց եւ մարմիններու, վարժարանաց, ուսուցչաց եւ առ հասարակ բոլոր սիրեցեալ ժողովուրդիս:

Կը մաղթեմ որ Վիճակիս բոլոր թեմերուն մէջ եւ մէն շրջանակի մէջ ատելութեան տեղ սէրը, ասութեան տեղ զոհողութիւնը, վրէժխնդրութեան տեղ ներումը, զոռողութեան տեղ եղբայրութիւնը, կազ եւ կռուի տեղ խաղաղութիւնը, խառնակութեան տեղ ներդաշնակութիւնը, չարին տեղ բարին, մահուան տեղ կեանքը գայ եւ տիւրէ եւ ղեկավարէ մեզ ամէնքս Առաջնորդ եւ առաջնորդուող, ժողովական եւ ժողովուրդ, եկեղեցական եւ աշխարհական, պաշտօնական եւ անպաշտօն, որպէս զի գաղութահայութիւնը իր բարոյական, ազգային, եկեղեցական, հոգեւորական միջոցներով աշխուանայ եւ բարձրանայ ի պատիւ Ազգին, Եկեղեցիին եւ Հայրենիքին:

ՂԵՒՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Ամերիկահայոց

(ԿՆԻՔ)

18 Դեկտ. 1933

Նիւ Եորք, Ն. Ե.

ՅԱՐԳԱՆՔ ՔԵՁ, ՄՐԲԱԶԱՆ ՎԱՅՐ

ՎՇՏԻ ԱՄԵՆԱԽՈՐՈՒՆԿ ԹԱԽԻԾՈՎ ԿՈՂԲԱՆՔ ԱՆԳԻՆ ԿՈՐՈՒՍՏԴ, ՄՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ, ԵՒ ՈՐՊԷՍ ՔՈ ՀԱՐԱԶԱՍ ՈՐԳԻՆԵՐԸ, ԿՈՒՆՏԵՆՔ ԱՆՎԱԽՈՐԷՆ ԸՆԹԱՆԱԼ ՔՈ ՄԱՏՆԱՆՇԱԾ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԷՆ՝ ԳԳՈՒԵԼՈՒ ԵՒ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐ ԵՒ ՔՈ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ՈՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՏՈՉՈՐԵՑԱՐ ԿԱՐՕՏՈՎ ԵՒ ԽԱԶՈՒԵՑԱՐ ՆՄԱՆ ԱՆՆԿՈՒՆ ԴԻԻՅԱԶՆԻ:

ՅԱՐԳԱՆՔ ԱՆՄԱՂ ՅԻՇԱՏԱԿԻԴ:

Ա. ՄԱՐԱԼ

Նիւ Եորք
1934 Յունվար 27



Սոյն գիրքը ունենալ ցանկացողները դիմելու են՝ հետեւեալ հասցէին ներկայեցնելով 50 սէնթ.—
A. DEBAGHIAN, 182 P. O. Box, Union City, N. J.

ՀՀ Ազգային գրադարան



NL0172864

